ԼՂԻՄ. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԻՋԱԴԵՊԻ ՇՈՒՐՋԸ

Երեք օր Ստեփանակերտում է գտնվում Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի այն հանձնաժողովի անդամների խումբը, որն ուսումնասիրում է 1989 թվականի հոկտեմբերի 10-ին մարզային կենտրոնում տեղի ունեցած ողբերգական միջադեպի հանգամանքները:

Խմբի կազմի մեջ մտնում են հանրապետության Գերագույն խորհրդի դեպուտատներ Հայկ Սարգսի Քոթանջյանը (խմբի ղեկավար), Ռոբերտ Սեդրակի Քոչարյանը, ինչպես նաև Հայկական ԽՍՀ առողջապահության մինիստրի առաջին տեղակալ Գրիգոր Մինասի Հարությունյանը և Հայկական ԽՍՀ արդարադատության մինիստրության բաժնի պետ Կիմ Գաբրիելի Բալայանը:

(Արմենպրես)